



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

23 մայիսի 2017 թվականի N 102-Ա

**ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1044-Ն որոշման հավելվածի 17-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2017 թվականի ապրիլի 18-ի N ԱԱ/ԱՄ-1-3/4082-17 գրությունը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան, Արովյան և Չարենցավան համայնքներում 2003-2013 թվականների ընթացքում «Պերական աջակցություն Հայաստանի Հանրապետության մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» ծրագրի շրջանակներում շահառու ճանաչված անձանց (ընտանիքների) բնակարանում բնակվելու և պայմանագրային պարտավորությունները պատշաճ կատարելու հանգամանքն ուսումնասիրելու նպատակով ձևավորել միջգերատեսչական աշխատանքային խմբեր՝ համաձայն NN 1, 2 և 3 հավելվածների:

2. Միջգերատեսչական աշխատանքային խմբերի ղեկավարներին՝ *ուսումնասիրություններն ավարտելուց հետո ներկայացնել համապատասխան եզրակացություններ:*

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2017 թվականի մայիսի 23  
ք. Հրազդան



Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ  
2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23-Ի N 102-Ա ՈՐՈՇՄԱՆ

ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԵՐ  
(ՀՐԱԶԳԻԱՆ)



1. *Սրելյա Ղազարյան* – խմբի ղեկավար, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի Հրազդանի սոցիալական աջակցության տարածքային գործակալության պետ,
2. *Համլերինա Հայարյան* – խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ,
3. *Հակոբ Սողոյան* – խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Ոստիկանության Հրազդանի բաժնի անչափահասների գործերով բաժնի ավագ տեսուչ (*համաձայնությամբ*),
4. *Արմինե Արրահամյան* – խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Ոստիկանության Հրազդանի անձնագրային բաժանմունքի առաջին կարգի մասնագետ (*համաձայնությամբ*),
5. *Անահիտ Գաբրիելյան* – խմբի անդամ, Հրազդան համայնքի ղեկավարի օգնական (*համաձայնությամբ*):



ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ  
(ԱԲՈՎՅԱՆ)

1. *Զինավոր Սարգսյան* – խմբի ղեկավար, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի Աբովյանի սոցիալական աջակցության տարածքային գործակալության պետ,
2. *Նարինե Խչոյան* – խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ,
3. *Գարեգին Հարությունյան* – խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Ոստիկանության Կոտայքի բաժնի անչափահասների գործերով բաժանմունքի պետ (*համաձայնությամբ*),
4. *Սոնա Զորոյան* – խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Ոստիկանության Կոտայքի անձնագրային բաժանմունքի առաջատար մասնագետ (*համաձայնությամբ*),
5. *Արրակ Հակոբյան* – խմբի անդամ, Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ (*համաձայնությամբ*):

ՄԻԶԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ  
(ՉԱՐԵՆՑԱՎԱՆ)



1. *Նորայր Կարապետյան* – խմբի ղեկավար, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի Չարենցավանի սոցիալական աջակցության տարածքային գործակալության պետ,
2. *Լուսինե Սերգոյան* – խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ,
3. *Անի Ալեքյան* – խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Ոստիկանության Չարենցավանի բաժնի անչափահասների գործերով բաժնի ավագ տեսուչ (*համաձայնությամբ*),
4. *Անարս Ասլանյան* - խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Ոստիկանության Չարենցավանի անձնագրային խմբի առաջին կարգի մասնագետ (*համաձայնությամբ*),
5. *Մուրեն Մուրադյան* – խմբի անդամ, Չարենցավան համայնքի ղեկավարի օգնական (*համաձայնությամբ*):